ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման VII նստաշրջանի արդյունքների մասին
(06.02.06թ. - 14.06.06թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման յոթերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 քառօրյա, 1 եռօրյա և 1 մեկօրյա նիստ: Նստաշրջանի ընթացքում (մայիսի 31-ին) ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ գումարվել է նաև 1 արտահերթ նիստ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 75 հարց, որից 38-ը ՀՀ Կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 27-ը՝ ԱԺ պատգամավորներինը, իսկ 10-ը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր: Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 61 հարցով, որից 45-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 14-ը՝ ԱԺ պատգամավորներինը, իսկ 2-ը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր էին, այդ թվում ՀՀ Նախագահի առարկություններն ու առաջարկությունները «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների վերաբերյալ:

Նստաշրջանի ընթացքում ՀՀ Կառավարության և ԱԺ պատգամավորների հեղինակած 3 նախագծեր միացվեցին և քննարկվեցին որպես համատեղ մշակված նախագծեր: Դրանք են՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխութուններ կատարելու մասին» ՀՀ օրենքները: Կառավարության 2 նախագիծ միացվել է և II ընթերցմամբ ու ամբողջությամբ ընդունվել որպես մեկ նախագիծ (ՀՀ քրեական օրեսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին):

ՀՀ Կառավարության ներկայացրած նախագծերից 14-ը ՀՀ Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 136 հարցերից 124-ը օրենքների նախագծեր էին, որոնցից նստաշրջանի ընթացքում քննարկվել են 70-ը: Դրանցից 6-ը ընդունվել են առաջին ընթերցմամբ (4-ը կառավարության նախաձեռնություններն էին, 2-ը՝ ԱԺ պատգամավորներինը), 3-ը՝ երկրորդ ընթերցմամբ (բոլորն էլ ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին), 56-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (47-ը՝ ՀՀ կառավարության, 7-ը ԱԺ պատգամավորների, 2-ը՝ ՀՀ Կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր), 5-ը՝ երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (3-ը՝ ՀՀ Կառավարության, 1-ը՝ ԱԺ պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր):

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթների և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը մերժվեց ԱԺ-ի կողմից, սակայն դրանք լրամշակվելուց հետո կրկին դրվեցին շրջանառության մեջ և նստաշրջանի ընթացքում ընդունվեցին որպես օրենք:

Շրջանառությունից հանվեցին 15 օրենքների նախագծեր, որոնցից 4-ը նստաշրջանի օրակարգ չընդգրկվելու պատճառով, 8-ը՝ քառօրյա նիստերի օրակարգ: ՀՀ Կառավարության հեղինակած ևս 1 նախագիծ և 2 նախագծերի փաթեթ հանվեցին շրջանառությունից՝ քննարկման անհրաժեշտությունը վերանալու պատճառով:

Ամբողջությամբ ընդունված 61 օրենքներից 50-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 8-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 3-ը՝ ՀՀ Կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր էին:

Ընդունված 61 օրենքներից 5-ը մայր օրենքներ էին (3-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին, 1-ը՝ ԱԺ պատգամավորների, 1-ը՝ ՀՀ Կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր էին), իսկ 56-ը գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ (47-ը՝ ՀՀ կառավարության, 7-ը՝ ԱԺ-ի պատգամավորների, իսկ 2-ը ՀՀ Կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախագծեր էին):

Ամբողջությամբ ընդունված 61 օրենքներից 24-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 4-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 20-ը՝ իրավական դաշտից են, 4-ը վերաբերում են գիտական, կրթական և մշակութային ոլորտներին, 4-ը՝ երկրի պաշտպանությանը և ազգային անվտանգությանը և այլն:

Նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 15 օրենքների նախագծերից 6-ը ամբողջությամբ ընդունվեցին (3-ը՝ՀՀ Կառավարության, 3-ը՝ ԱԺ պատգամավորների), իսկ մնացած 9-ը այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար (3-ը՝ ՀՀ Կառավարության, 6-ը՝ ԱԺ պատգամավորների):

Ազգային ժողովը՝

ա) լսեց

1. ՀՀ Կենտրոնական բանկի 2005թ. տարեկան հաշվետվությունը,
2. ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի 2004թ. գործունեության մասին հաղորդումը,
3. Առաջին և ներկայիս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանների՝ «2005թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցները,
4. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության 2006թ. ծրագիրը.

բ) Հայաստանի III Հանրապետության պառլամենտարիզմի պատմության մեջ առաջին անգամ, համաձայն ՀՀ Սահմանադրության, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեց՝

- ՀՀ Արդարադատության խորհրդի 2 անդամներին՝ Ռ. Ավագյանին և Գ. Բաղիրյանին,
- Արմեն Հարությունյանին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում.

գ) քվեարկությամբ հաստատեց՝

1. Պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. ծրագրի կատարման հաշվետվությունը,
2. Պետական բյուջեի 2005թ. տարեկան հաշվետվությունը.

Ընդունված պատգամավորական նախագծերի մեջ առավել մեծ թիվ են կազմում ՀՀ Ազգային ժողովում կոալիցիան ներկայացնող պատգամավորների հեղինակած նախագծերը:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 39 միջազգային պայմանագրեր, որոնցից 10-ը տնտեսական բնագավառում համագործակցության մասին է, 4-ը՝ պաշտպանական, 6-ը՝ իրավական, 3-ը՝ սոցիալական, 6-ը՝ ֆինանսական և այլն:

Նստաշրջանի ընթացքում 21 պատգամավոր գրավոր և 83 պատգամավոր բանավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: 172 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 49-ը վերաբերել են կառավարության գործունեությանը:

Նստաշրջանի աշխատանքների ավարտից հետո գումարվեց 2 արտահերթ նստաշրջան՝ մեկը ԱԺ-ի (հունիսի 15-ին) և մեկը ՀՀ Կառավարության (հուլիսի 6-ին) նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանի ընթացքում, ընդհանուր առմամբ քննարկվեցին 14 օրենքների նախագիծ և նախագծերի փաթեթ, վավերացվեցին 3 միջազգային պայմանագրեր և ընդունվեց «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ-ի որոշումը:

Քննարկված նախագծերից 5-ը (բոլորն էլ ՀՀ Կառավարության) ընդունվեցին երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ, 8-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (6-ը՝ ՀՀ Կառավարության, 2-ը՝ ԱԺ պատգամավորներինը) և ՀՀ Կառավարության նախաձեռնած

մեկ նախագծերի փաթեթ, այն է՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», «ՀՀ Հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ մինչև աշնանային նստաշրջան լայն քննարկումներ կազմակերպելու և առաջարկություններ ընդունելու ակնկալիքով: